# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5198-Ա « 19 » դեկտեմբերի 2025թ.

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 59-րդ հոդվածով և 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Բագրատունյաց» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 11.11.2025թ. հ.075-226 գրությունը և «Երևանի ապրանքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 07.11.2025թ. տրված N 25/20 գնահատման հաշվետվությունը..

1. Երևանի «Բագրատունյաց» առողջության կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն)՝ Ընկերության հաշվեկշռում հաշվառված, 2003թ. արտադրության GAZ 3110-121 մակնիշի (պետ. համարանիշը՝ 551 DE 61, հենասարքի համարը՝ 1193458) տրանսպորտային միջոցի մեկնարկային գինը սահմանել 420.0 հազար ՀՀ դրամ:

2.Հանձնարարել Ընկերության տնօրենին՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունում կատարել օտարված տրանսպորտային միջոցներին վերաբերող համապատասխան փաստաթղթերի ձևակերպումները:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի և Ընկերության տնօրենի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Ս.Մադաթյանի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**